Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-491[1]-17.01.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատախազության մասին» 2017 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-198-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 7-րդ մասում «խախտումներ» բառը փոխարինել «դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առերևույթ հիմքեր» բառերով:

Հոդված 2. Օրենքի 23-րդ հոդվածում՝

1. 3-րդ մասից հանել «Արդարադատության ակադեմիայի ռեկտորը,» բառերը, իսկ «երեք իրավաբան-գիտնական,» բառերը փոխարինել «չորս իրավաբան-գիտնական,» բառերով.

2. Լրացնել նոր՝ 6.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.1. Հանձնաժողովների անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել գլխավոր դատախազի հրամանով՝ հանձնաժողովի նիստերից երկու և ավելի անգամ անընդմեջ անհարգելի պատճառով բացակայելու դեպքում: Հանձնաժողովների անդամի լիազորությունները դադարում են այն դեպքում, երբ վերջինս ներկայացնում է համապատասխան դիմում կամ ազատվում է դատախազի պաշտոնից կամ զբաղեցնում է դատախազի այնպիսի պաշտոն, որի պարագայում խախտվում են սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված պահանջները: Հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարման փաստն արձանագրվում է գլխավոր դատախազի հրամանով:»:

Հոդված 3. Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Դատախազը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և իր լիազորությունների շրջանակներում բողոքարկում է այն դատական ակտերը, որոնք իր կարծիքով չհիմնավորված են կամ անօրինական:»:

Հոդված 4. Օրենքի 29-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1-ին մասի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Դատախազի կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է՝»

2. 5-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու բացառիկ դեպքերի առկայությունը պարզելու նպատակով դատախազն իրավունք ունի՝»

3. «պետություն» բառից և դրա հոլովաձևերից հետո լրացնել համապատասխանաբար «(համայնք)» բառը և դրա հոլավաձևերը.

Հոդված 5. Օրենքի 32-րդ հոդվածի՝

1. 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Վերադաս դատախազը անհրաժեշտության դեպքում կարող է ստեղծել դատախազների խումբ՝ դատախազության լիազորությունների իրականացումը հանձնարարելով մի քանի դատախազների, և նշանակել դատախազների խմբի ղեկավար: Դատախազների խմբի ղեկավարը կոնկրետ գործով դատախազական լիազորություններն իրականացնելիս հանդիսանում է վերադաս դատախազ դատախազների խմբի անդամների նկատմամբ: Դատախազների խմբի ղեկավարի և անդամի լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով:»:

2. 7-րդ մասի 5-րդ կետում «նմանատիպ այլ դեպքերում» բառերից հետո լրացնել «կամ» բառը:

3. 7-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ և 7-րդ կետերով.

«6) ստորադաս դատախազի աշխատանքային ծանրաբեռնվածության դեպքում՝ վերջինիս գրավոր համաձայնությամբ կամ

7) ստորադաս դատախազի դատախազության այլ ստորաբաժանում փոխադրվելու դեպքում:»:

Հոդված 6. Օրենքի 33-րդ հոդվածի՝

1. 1-ին մասից հանել «22-ից» բառերը:

2. 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 33.1-ին հոդվածով.

«**Հոդված 33.1. Դատախազ նշանակվելու համար թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձին ներկայացվող պահանջները**

1. Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող բաց մրցույթին կարող է մասնակցել 22-ից մինչև 63 տարեկան Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը՝

1) Հայաստանի Հանրապետությունում ստացել է բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան է ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով.

2) տիրապետում է հայերենին.

3) որի նկատմամբ չեն տարածվում սույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումները:

2. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու համար մրցույթին կարող է մասնակցել առնվազն երկու տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող անձը:»:

Հոդված 8. Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 5-րդ կետում «դադարեցվել է» բառերից հետո «, կամ քրեական հետապնդում չի իրականացվել» բառերը հանել,

2. 8-րդ կետում «զրկվել է» բառերը փոխարինել «զրկված է» բառերով:»:

Հոդված 9. Օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասում՝ «հայտարարվում է նոր մրցույթ» բառերից հետո լրացնել «, եթե այդ ժամկետում գլխավոր դատախազը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով գլխավոր դատախազի տեղակալ չի նշանակում» բառերը:

Հոդված 10. Օրենքի 37-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 37. Դատախազությունում պաշտոնների դասակարգումը**

«1. Դատախազությունում պաշտոնները դասակարգվում են հետևյալ աստիճանակարգությամբ՝

1) գլխավոր դատախազ.

2) գլխավոր դատախազի տեղակալ.

3) գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար, Երևան քաղաքի դատախազ, զինվորական դատախազի տեղակալ.

4) գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի տեղակալ, Երևան քաղաքի դատախազի տեղակալ, Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազ, մարզի դատախազ, կայազորի զինվորական դատախազ, գլխավոր դատախազության ավագ դատախազ, զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար.

5) գլխավոր դատախազության դատախազ, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ավագ դատախազներ, զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազ, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների տեղակալներ, մարզերի դատախազների տեղակալներ, կայազորների զինվորական դատախազների տեղակալներ.

6) գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների դատախազներ, զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ավագ դատախազներ, Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազներ, զինվորական կենտրոնական դատախազության դատախազ.

7) Երևան քաղաքի դատախազության դատախազներ, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազությունների ավագ դատախազներ, զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանման դատախազներ,

8) Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազությունների դատախազներ:»:

Հոդված 11. Օրենքի 39-րդ հոդվածում՝

1. ամբողջ տեքստում «դատախազության առաջխաղացման ցուցակ» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում» բառերով և դրանց հոլովաձևերով,

2. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակներն են՝

1) սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պաշտոններում նշանակվելու համար առաջխաղացման ցուցակ.

2) սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված պաշտոններում նշանակվելու համար առաջխաղացման ցուցակ.

3) սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված պաշտոններում նշանակվելու համար առաջխաղացման ցուցակ:

4) սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված պաշտոններում նշանակվելու համար առաջխաղացման ցուցակ:

5) սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված պաշտոններում նշանակվելու համար առաջխաղացման ցուցակ:»,

3. 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) արտահերթ կարգով, երբ գլխավոր դատախազն առաջարկություն է ներկայացնում որակավորման հանձնաժողով՝ դատախազին սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված դատախազների ծառայողական առաջխաղացման որևէ ցուցակում ընդգրկելու վերաբերյալ՝ ներկայացնելով գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի տված համապատասխան գնահատագիր: Որակավորման հանձնաժողովը գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի տված համապատասխան գնահատագիրն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համապատասխան դատախազից պահանջում և ստանում է բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը: Որակավորման հանձնաժողովի նախագահը բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկն ստանալուց հետո՝ մեկօրյա ժամկետում, այն ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Որակավորման հանձնաժողովի նախագահը եզրակացությունն ստանալուց հետո՝ որակավորման հանձնաժողովի նիստից առնվազն երեք օր առաջ, այն տրամադրում է որակավորման հանձնաժողովի անդամներին: Դատախազն ընդգրկվում է դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում որակավորման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում: Սույն հոդվածի 1-ին մասի 4-5-րդ կետերով նախատեսված դատախազների առաջխաղացման որևէ ցուցակում դատախազն ընդգրկվում է իր անմիջական վերադասի պատճառաբանված զեկուցագրի հիման վրա՝ գլխավոր դատախազի հրամանով: Զեկուցագրի ներկայացումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում սույն հոդվածի 1-ին մասի 4-5-րդ կետերով նախատեսված դատախազների առաջխաղացման որևէ ցուցակում ընդգրկվելուն հավակնող դատախազը գլխավոր դատախազություն է ներկայացնում բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ, որը մեկօրյա ժամկետում ներկայացվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:»,

4. լրացնել նոր՝ 5.1-ին և 5.2-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում կարող է ընդգրկվել սույն օրենքի 38-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված ուսումնառությունից ազատված անձը կամ վերջին հինգ տարվա ընթացքում սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված պաշտոնում առնվազն մեկ տարի աշխատած և կարգապահական տույժ չունեցող անձը կամ վերջին 10 տարվա ընթացքում առնվազն երկու տարի դատախազ աշխատած անձը:

5.2. Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում կարող է ընդգրկվել սույն օրենքի 38-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված ուսումնառությունից ազատված անձը կամ վերջին հինգ տարվա ընթացքում սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված պաշտոնում առնվազն վեց ամիս աշխատած և կարգապահական տույժ չունեցող անձը կամ վերջին 10 տարվա ընթացքում առնվազն մեկ տարի դատախազ աշխատած անձը:»:

Հոդված 12. Օրենքի 42-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասում «4-5-րդ» բառերը փոխարինել «4-7-րդ» բառերով, իսկ «2-րդ և 3-րդ» բառերը՝ «2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ» բառերով:

2. 3-րդ մասում «6-րդ կետով» բառերը փոխարինել «8-րդ կետով» բառերով:

Հոդված 13. Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասում «անձն իր պաշտոնն ստանձնում է» բառերը փոխարինել «անձը» բառով, իսկ «տրված հետևյալ երդմամբ» բառերը փոխարինել «տալիս է հետևյալ երդումը» բառերով:

Հոդված 14. Օրենքի 45-րդ հոդվածում՝

1. 5-րդ մասում «երկրորդ դասի խորհրդականի» բառերը փոխարինել «առաջին դասի խորհրդականի» բառերով:

2. 6-րդ մասում «դասային աստիճանն է» բառերից հետո լրացնել «իսկ ստորին սահմանը՝ երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճանը:» բառերը:

3. Լրացնել նոր՝ 6.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ.

«6.1. Սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված պաշտոնին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանը արդարադատության երրորդ դասի խորհրդականի դասային աստիճանն է, իսկ ստորին սահմանը՝ երրորդ դասի խորհրդականի դասային աստիճանը:»:

Հոդված 15. Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասում «6-րդ» բառը փոխարինել «6.1-ին» բառով:

Հոդված 16. Օրենքի 49-րդ հոդվածում լրացնել նոր՝ 6-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Սույն հոդվածում նշված եզրույթների մեկնաբանման և կիրառման համար, այնքանով որքանով, վերաբերելի են «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի կարգավորումները:»:

Հոդված 17. Օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Դատախազի արտահերթ ատեստավորումը կարող է անցկացվել դատախազի պաշտոն զբաղեցնելուց, հերթական կամ արտահերթ ատեստավորումից առնվազն վեց ամիս հետո:»:

Հոդված 18. Օրենքի 57-րդ հոդվածում՝

1. 8-րդ մասում լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Գլխավոր դատախազի որոշմամբ կարգապահական խախտում կատարած դատախազը կարող է ազատվել կարգապահական տույժից, եթե կարգապահական խախտումը կատարել է առաջին անգամ, զղջացել է դրա համար և կարգապահական խախտման հետևանքներ առկա չեն:»:

2. Ուժը կորցրած ճանաչել 10-րդ մասը:

Հոդված 19. Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Դատախազը կարող է փոխադրվել սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ավելի բարձր աստիճանակարգություն ունեցող պաշտոնի գլխավոր դատախազի հրամանով՝ սույն օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 20. Օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետում «դադարեցնելը» բառից հետո «կամ քրեական հետապնդում չիրականացնելը» բառերը հանել:

Հոդված 21. Օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետում «դադարեցնելը» բառից հետո «կամ քրեական հետապնդում չիրականացնելը» բառերը հանել:

Հոդված 22. Օրենքում «պետական շահեր» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել համապատասխանաբար «պետական (համայնքային) շահեր» բառերով և դրանց հոլովաձևերով:

Հոդված 23. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դատախազների դասային աստիճանները համապատասխանեցվում են սույն օրենքով սահմանված կարգավորումներին, բացառությամբ այն դեպքերի, երբ նման համապատասխանեցման արդյունքում դատախազին արդեն իսկ շնորհված դասային աստիճանը ենթակա կլինի իջեցման:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ (Կ-491[1]-17.01.2023-ՊԻ-011/1) ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջին ընթերցում

Կ-491[1]-17.01.2023-ՊԻ-011/1

Հոդված 1. «Դատախազության մասին» 2017 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-198-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 7-րդ մասում «խախտումներ» բառը փոխարինել «դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առերևույթ հիմքեր» բառերով:

Հոդված 2. Օրենքի 23-րդ հոդվածում՝

1.~~)~~ 3-րդ մասից հանել «Արդարադատության ակադեմիայի ռեկտորը,» բառերը, իսկ «երեք իրավաբան-գիտնական,» բառերը փոխարինել «չորս իրավաբան-գիտնական,» բառերով.

2.~~)~~ Լրացնել նոր՝ 6.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.1. Հանձնաժողովների անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել ~~<<~~ գլխավոր դատախազի հրամանով՝ հանձնաժողովի նիստերից երկու և ավելի անգամ անընդմեջ անհարգելի պատճառով բացակայելու դեպքում: Հանձնաժողովների անդամի լիազորությունները դադարում են այն դեպքում, երբ վերջինս ներկայացնում է համապատասխան դիմում կամ ազատվում է դատախազի պաշտոնից կամ զբաղեցնում է դատախազի այնպիսի պաշտոն, որի պարագայում խախտվում են սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված պահանջները: Հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարման փաստն արձանագրվում է գլխավոր դատախազի հրամանով:»:

Հոդված 3. Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Դատախազը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և իր լիազորությունների շրջանակներում բողոքարկում է այն դատական ակտերը, որոնք իր կարծիքով չհիմնավորված են

կամ անօրինական:~~Դատախազը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և իր լիազորությունների շրջանակներում պարտավոր է բողոքարկել այն դատական ակտերը, որոնք, իր կարծիքով, հիմնավոր չեն կամ ապօրինի են~~:»:

Հոդված 4. Օրենքի 29-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.~~)~~ 1-ին մասի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Դատախազի կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է՝»

2~~)~~. 5-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու բացառիկ դեպքերի առկայությունը պարզելու նպատակով դատախազն իրավունք ունի՝~~Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու հիմքերի առկայությունը պարզելու նպատակով դատախազը իրավունք ունի՝~~»

3~~)~~. «պետություն» բառից և դրա հոլովաձևերից հետո լրացնել համապատասխանաբար «(համայնք)» բառը և դրա հոլավաձևերը.

Հոդված 5. Օրենքի 32-րդ հոդվածի՝

1~~)~~. 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Վերադաս դատախազը անհրաժեշտության դեպքում կարող է ստեղծել դատախազների խումբ՝ դատախազության լիազորությունների իրականացումը հանձնարարելով մի քանի դատախազների, և նշանակել դատախազների խմբի ղեկավար: Դատախազների խմբի ղեկավարը կոնկրետ գործով դատախազական լիազորություններն իրականացնելիս հանդիսանում է վերադաս դատախազ դատախազների խմբի անդամների նկատմամբ: Դատախազների խմբի ղեկավարի և անդամի լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով:»:

2~~)~~. 7-րդ մասի 5-րդ կետում «նմանատիպ այլ դեպքերում» բառերից հետո լրացնել «կամ» բառը:

3~~)~~. 7-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ և 7-րդ կետերով.

«6) ստորադաս դատախազի աշխատանքային ծանրաբեռնվածության դեպքում՝ վերջինիս գրավոր համաձայնությամբ կամ

7) ~~Հայաստանի Հանրապետության~~ստորադաս դատախազի դատախազության այլ ստորաբաժանում ~~տեղափոխվելու~~փոխադրվելու դեպքում:»:

Հոդված 6. Օրենքի 33-րդ հոդվածի՝

1~~)~~. 1-ին մասից հանել «22-ից» բառերը:

2~~)~~. 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 33.1-ին հոդվածով.

«**Հոդված 33.1.** **Դատախազ նշանակվելու համար թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձին ներկայացվող պահանջները**

~~**Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձին ներկայացվող պահանջները**~~

1. Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող բաց մրցույթին կարող է մասնակցել 22-ից մինչև 63 տարեկան Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը՝

1) Հայաստանի Հանրապետությունում ստացել է բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան է ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով.

2) տիրապետում է հայերենին.

3) որի նկատմամբ չեն տարածվում սույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումները:

2. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու համար մրցույթին կարող է մասնակցել առնվազն երկու տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող անձը?»:

Հոդված 8. Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝

1.~~)~~ 5-րդ կետում «դադարեցվել է» բառերից հետո «, կամ քրեական հետապնդում չի իրականացվել» բառերը հանել,

2~~)~~. 8-րդ կետում «զրկվել է» բառերը փոխարինել «զրկված է» բառերով:»:

Հոդված 9. Օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասում՝ «հայտարարվում է նոր մրցույթ» բառերից հետո լրացնել «, եթե այդ ժամկետում գլխավոր դատախազը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով գլխավոր դատախազի տեղակալ չի նշանակում» բառերը:

Հոդված 10. Օրենքի 37-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 37. Դատախազությունում պաշտոնների դասակարգումը**

«1. Դատախազությունում պաշտոնները դասակարգվում են հետևյալ աստիճանակարգությամբ՝

1) գլխավոր դատախազ.

2) գլխավոր դատախազի տեղակալ.

3) գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար, Երևան քաղաքի դատախազ, զինվորական դատախազի տեղակալ.

4) գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի տեղակալ, Երևան քաղաքի դատախազի տեղակալ, Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազ, մարզի դատախազ, կայազորի զինվորական դատախազ, գլխավոր դատախազության ավագ դատախազ, զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար.

5) գլխավոր դատախազության դատախազ, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ավագ դատախազներ, զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազ, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների տեղակալներ, մարզերի դատախազների տեղակալներ, կայազորների զինվորական դատախազների տեղակալներ.

6) գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների դատախազներ, զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ավագ դատախազներ, Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազներ, զինվորական կենտրոնական դատախազության դատախազ.

7) Երևան քաղաքի դատախազության դատախազներ, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազությունների ավագ դատախազներ, զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանման դատախազներ,

8) Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազությունների դատախազներ:»:

Հոդված 11. Օրենքի 39-րդ հոդվածում՝

1) ամբողջ տեքստում «դատախազության առաջխաղացման ցուցակ» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակ» բառերով և դրանց հոլովաձևերով,

2.) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակներն են՝

1) սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պաշտոններում նշանակվելու համար առաջխաղացման ցուցակ.

2) սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված պաշտոններում նշանակվելու համար առաջխաղացման ցուցակ.

3) սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված պաշտոններում նշանակվելու համար առաջխաղացման ցուցակ:

4) սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված պաշտոններում նշանակվելու համար առաջխաղացման ցուցակ:

5) սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված պաշտոններում նշանակվելու համար առաջխաղացման ցուցակ:»,

3.~~)~~ 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) 2) արտահերթ կարգով, երբ գլխավոր դատախազն առաջարկություն է ներկայացնում որակավորման հանձնաժողով՝ դատախազին սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված դատախազների ծառայողական առաջխաղացման որևէ ցուցակում ընդգրկելու վերաբերյալ՝ ներկայացնելով գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի տված համապատասխան գնահատագիր: Որակավորման հանձնաժողովը գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի տված համապատասխան գնահատագիրն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համապատասխան դատախազից պահանջում և ստանում է բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը: Որակավորման հանձնաժողովի նախագահը բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկն ստանալուց հետո՝ մեկօրյա ժամկետում, այն ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Որակավորման հանձնաժողովի նախագահը եզրակացությունն ստանալուց հետո՝ որակավորման հանձնաժողովի նիստից առնվազն երեք օր առաջ, այն տրամադրում է որակավորման հանձնաժողովի անդամներին: Դատախազն ընդգրկվում է դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում որակավորման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում: Սույն հոդվածի 1-ին մասի 4-5-րդ կետերով նախատեսված դատախազների առաջխաղացման որևէ ցուցակում դատախազն ընդգրկվում է իր անմիջական վերադասի պատճառաբանված զեկուցագրի հիման վրա՝ գլխավոր դատախազի հրամանով: Զեկուցագրի ներկայացումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում սույն հոդվածի 1-ին մասի 4-5-րդ կետերով նախատեսված դատախազների առաջխաղացման որևէ ցուցակում ընդգրկվելուն հավակնող դատախազը գլխավոր դատախազություն է ներկայացնում բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ, որը մեկօրյա ժամկետում ներկայացվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:~~արտահերթ կարգով, երբ գլխավոր դատախազն առաջարկություն է ներկայացնում որակավորման հանձնաժողով՝ դատախազին սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված դատախազների առաջխաղացման որևէ ցուցակում~~

~~ընդգրկելու վերաբերյալ՝ ներկայացնելով գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի տված համապատասխան գնահատագիր: Դատախազն ընդգրկվում է դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում որակավորման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում: Սույն հոդվածի 1-ին մասի 4-5-րդ կետերով նախատեսված դատախազների առաջխաղացման որևէ ցուցակում դատախազն ընդգրկվում է իր անմիջական վերադասի պատճառաբանված զեկուցագրի հիման վրա՝ գլխավոր դատախազի հրամանով~~:»,

4~~)~~. լրացնել նոր՝ 5.1-ին և 5.2-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում կարող է ընդգրկվել սույն օրենքի 38-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված ուսումնառությունից ազատված անձը կամ վերջին հինգ տարվա ընթացքում սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված պաշտոնում առնվազն մեկ տարի աշխատած և կարգապահական տույժ չունեցող անձը կամ վերջին 10 տարվա ընթացքում առնվազն երկու տարի դատախազ աշխատած անձը:

5.2. Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում կարող է ընդգրկվել սույն օրենքի 38-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված ուսումնառությունից ազատված անձը կամ վերջին հինգ տարվա ընթացքում սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված պաշտոնում առնվազն վեց ամիս աշխատած և կարգապահական տույժ չունեցող անձը կամ վերջին 10 տարվա ընթացքում առնվազն մեկ տարի դատախազ աշխատած անձը:»:

Հոդված 12. Օրենքի 42-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասում «4-5-րդ» բառերը փոխարինել «4-7-րդ» բառերով, իսկ «2-րդ և 3-րդ» բառերը՝ «2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ» բառերով:

2. 3-րդ մասում «6-րդ կետով» բառերը փոխարինել «8-րդ կետով» բառերով:

Հոդված 13. Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասում «անձն իր պաշտոնն ստանձնում է» բառերը փոխարինել «անձը» բառով, իսկ «տրված հետևյալ երդմամբ» բառերը փոխարինել «տալիս է հետևյալ երդումը» բառերով:

Հոդված 14. Օրենքի 45-րդ հոդվածում՝

1. 5-րդ մասում «երկրորդ դասի խորհրդականի» բառերը փոխարինել «առաջին դասի խորհրդականի» բառերով:

2. 6-րդ մասում «դասային աստիճանն է» բառերից հետո լրացնել «իսկ ստորին սահմանը՝ երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճանը:» բառերը:

3. Լրացնել նոր՝ 6.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ.

«6.1. Սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված պաշտոնին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանը արդարադատության երրորդ դասի խորհրդականի դասային աստիճանն է, իսկ ստորին սահմանը՝ երրորդ դասի խորհրդականի դասային աստիճանը:»:

Հոդված 15. Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասում «6-րդ» բառը փոխարինել «6.1-ին» բառով:

Հոդված 16. Օրենքի 49-րդ հոդվածում լրացնել նոր՝ 6-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Սույն ~~մասում~~հոդվածում նշված եզրույթների մեկնաբանման և կիրառման համար, ~~mutatis mutandis~~այնքանով որքանով, վերաբերելի են «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի կարգավորումները:»:

Հոդված 17. Օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Դատախազի արտահերթ ատեստավորումը կարող է անցկացվել դատախազի պաշտոն զբաղեցնելուց, հերթական կամ արտահերթ ատեստավորումից առնվազն վեց ամիս հետո:»:

Հոդված 18. Օրենքի 57-րդ հոդվածում՝

1. 8-րդ մասում լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Գլխավոր դատախազի որոշմամբ կարգապահական խախտում կատարած դատախազը կարող է ազատվել կարգապահական տույժից, եթե կարգապահական խախտումը կատարել է առաջին անգամ, զղջացել է դրա համար և կարգապահական խախտման հետևանքներ առկա չեն:»:

2. Ուժը կորցրած ճանաչել 10-րդ մասը:

Հոդված 19. Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Դատախազը կարող է փոխադրվել սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ավելի բարձր աստիճանակարգություն ունեցող պաշտոնի << գլխավոր դատախազի հրամանով՝ սույն օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 20. Օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետում «դադարեցնելը» բառից հետո «կամ քրեական հետապնդում չիրականացնելը» բառերը հանել:

Հոդված 21. Օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետում «դադարեցնելը» բառից հետո «կամ քրեական հետապնդում չիրականացնելը» բառերը հանել:

Հոդված 22. Օրենքում «պետական շահեր» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել համապատասխանաբար «պետական (համայնքային) շահեր» բառերով և դրանց հոլովաձևերով:

Հոդված 23 . ~~Եզրափակիչ և անցումային դրույթ~~

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դատախազների դասային աստիճանները համապատասխանեցվում են սույն օրենքով սահմանված կարգավորումներին, բացառությամբ այն դեպքերի, երբ նման համապատասխանեցման արդյունքում դատախազին արդեն իսկ շնորհված դասային աստիճանը ենթակա կլինի իջեցման:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-491-17.01.2023-ՊԻ-011/0) ՕՐԵՆՔԻ ԵՎ ««ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-491[1]-17.01.2023-ՊԻ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	**Կառավարություն**	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «(այսուհետ՝ Օրենսգիրք)» ձևակերպումն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ օրենքի նախագծում այլևս հղում չի կատարվում: Բացի այդ, օրենքի նախագծի 1-ին հոդվածում «39.1-րդ» ձևակերպումն առաջարկում	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			ենք փոխարինել «39.1-ին» ձևակերպմամբ՝ դասական թվականների ճիշտ գրության ձևը պահպանելու նպատակով:		
2.	**Կառավարություն**	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացվող նոր՝ 39.1-ին հոդվածում կիրառվում է «խմբի ղեկավար դատախազ» ձևակերպումը, իսկ 39.2-րդ հոդվածում՝ «դատախազների խմբի ղեկավար» ձևակերպումը: Առաջարկում ենք Նախագծում միևնույն միտքն արտահայտելիս կիրառել միևնույն բառերը՝ որոշակի հերթականությամբ, որը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված պահանջից: Ըստ այդմ Նախագծի 1-ին հոդվածով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացվող նոր՝ 39.1-ին հոդվածում «խմբի ղեկավար դատախազ» ձևակերպումը փոխարինվել է «դատախազական	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			խմբի ղեկավարը» ձևակերպմամբ: Բացի այդ Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է նախատեսել դատախազական խմբի կողմից միջդատական վարույթի նկատմամբ դատավարական ղեկավարման ինստիտուտ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոր քրեական դատավարության օրենսգրքում բացակայում են դատախազի կողմից դատավարական ղեկավարման դրույթներ, ուստի առաջարկվում է խմբագրել նախագծի նշված դրույթը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացվող նոր՝ 39.1-ին հոդվածի վերնագրից և 1-ին մասից հանել դատավարական ղեկավարման վերաբերյալ կարգավորումը:		
«ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
3.	**«Հայաստան» խմբակցություն**	Նախագծի 1-ին հոդված	Հանել նախագծի 1-ին հոդվածը:	Չի ընդունվել: Նախագծի	Չի ընդունվել:

				հիմնավորման մեջ քննարկվող հոդվածի նպատակահարմարությունը հիմնավորվում է նրանով, որ Օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասում առկա «խախտումներ» եզրույթը անորոշ է և հասկանալի չէ՝ տվյալ եզրույթը վերաբերում է քրեադատավարական կամ քրեական օրենքի խախտումների՞ն, թե՞ նաև դատախազի վարքագծի կանոնների խախտումներին: Քանի որ բոլոր դեպքերում տվյալ խախտումները վկայում են դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առերևույթ հիմքերի մասին, ուստի առաջարկվում է	

				«խախտումներ» եզրույթը փոխարինել «դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առերևույթ հիմքեր» բառերով: Միևնույն ժամանակ, «խախտում» եզրույթի կիրառումը կարող է մեկնաբանվել արդեն իսկ համապատասխան արարքի որակում, արարքին այդ փուլում իրավական գնահատական տալ՝ այն պայմաններում, երբ արարքի որակումը միայն իրավասու սուբյեկտի լիազորությունն է:	
4.	**«Հայաստան» խմբակցություն**	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.	Չի ընդունվել: Դատախազությունը Հայաստանի Հանրապետությունում	Չի ընդունվել:

			«**Հոդված 2.** Օրենքի 23-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 23. Գլխավոր դատախազին առընթեր էթիկայի և որակավորման հանձնաժողովները 1. Գլխավոր դատախազին առընթեր գործում են էթիկայի և որակավորման հանձնաժողովներ: 2. Էթիկայի հանձնաժողովը բաղկացած է յոթ անդամից: Էթիկայի հանձնաժողովի կազմի մեջ են մտնում գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, երեք իրավաբան-գիտնական, գլխավոր դատախազի, գլխավոր դատախազի՝ էթիկայի և որակարվորման հանձնաժողովների անդամ չհանդիսացող տեղակալների, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների	ինքնուրույն և միասնական համակարգ է, որն իշխանության երեք ճյուղերից անկախ իրականացնում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունները, ինչն ընդգծվել է նաև Սահմանադրական բարեփոխումների 2014թ. հայեցակարգում: Ուստի դատախազության գործունեության սահմանադրաիրավական հիմքերը կանխորոշում են վերջինիս՝ իշխանության երեք ճյուղերից անկախության անհրաժեշտությունը,	

			ղեկավարների, Երևան քաղաքի դատախազի, մարզերի դատախազների, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների և կայազորների զինվորական դատախազների կողմից ձայների մեծամասնությամբ ընտրված **<u>երկու</u>** դատախազ, ինչպես նաև գլխավոր դատախազի կողմից բաց մրցույթի արդյունքներով նշանակվող **<u>մեկ</u> փորձագետ**: Էթիկայի հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը: 2.1 Էթիկային հանձնաժողովում իրավաբան-գիտնականի նշանակման համար Ազգային ժողովի կառավարող և ընդդիմադիր խմբակցությունները «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով գլխավոր դատախազին են ներկայացնում յուրաքանչյուրը երեքական իրավաբան-գիտնականի	ինչպիսի պայմաններում իշխանության ճյուղերի, այդ թվում՝ Ազգային ժողովի՝ Սահմանադրությամբ նախատեսված լիազորություններից զատ որևէ այլ հիմքով դատախազության գործունեության մեջ ներգրավումը կարող է ստվերել դատախազության անկախությունն ու ինքնուրույնությունը: Բացի այդ, առաջարկվող կարգավորումների պարագայում որոշակիորեն ավելանալու է քաղաքական ազդեցությունը ՀՀ գլխավոր	

			թեկնածություն: 2.2. Էթիկայի հանձնաժողովի իրավաբան-գիտնականներից մեկն ընտրվում է Ազգային ժողովի կառավարող խմբակցության կողմից ներկայացված թեկնածուների ցանկից, մեկն՝ Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցության կողմից ներկայացված թեկնածուների ցանկից: Ներկայացված թեկնածուներից ընտրությունը կատարում և համապատասխան տեղում նշանակում է գլխավոր դատախազը: 2.3. Էթիկայի հանձնաժողովի՝ Ազգային ժողովի խմբակցության կողմից առաջադրված իրավաբան-գիտնականի պաշտոնավարման ժամկետը լրանալուց ոչ շուտ, քան երկու, և ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ, իսկ այլ հիմքով իրավաբան գիտնականի թափուր տեղ առաջանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում գլխավոր դատախազն այդ մասին	դատախազին առընթեր որակավորման և էթիկայի հանձնաժողովներում, ինչը ողջունելի չէ: Ավելին, «Դատախազության մասին» նախկին օրենքի գործողության ժամանակահատվածում, երբ ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի անդամ 4 իրավաբան-գիտնականները նշանակվում էին Հանրապետության նախագահի կողմից, միջազգային գործընկերները բազմիցս արձանագրել են նման կարգավորումների	

			տեղեկացնում է Ազգային ժողովի նախագահին և համապատասխան խմբակցությանը: 2.4. Եթե էթիկայի հանձնաժողովի՝ Ազգային ժողովի խմբակցությանը վերապահված իրավաբան-գիտնականի տեղում սույն հոդվածի 2.3-րդ մասում սահմանված տեղեկացումից հետո մեկամսյա ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա այդ տեղում թեկնածու առաջադրելու և նշանակելու իրավունքն անցնում է գլխավոր դատախազին: 3. Որակավորման հանձնաժողովը կազմված է **յոթ** անդամից, իսկ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործառույթներ (այսուհետ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ) իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի	աննպատակահարմարությունը: Մասնավորապես, Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (GRECO, Group of States against Corruption)՝ ՀՀ գնահատման 4-րդ պարբերական զեկույցի 178-րդ կետով առաջարկվել էր փոփոխել էթիկայի հանձնաժողովի ձևավորման կարգը՝ «ամրապնդելով դատախազության անկախությունը անհարկի քաղաքական ազդեցությունից (strengthening the prosecution’s independence from	

			համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ **<u>ինն</u>** անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, **<u>երկու</u>** դատախազ, երեք իրավաբան-գիտնական, գլխավոր դատախազի կողմից բաց մրցույթի արդյունքներով նշանակվող **<u>մեկ</u> փորձագետ,** իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ նաև երկու փորձագետ, որոնց նշանակում է գլխավոր դատախազը: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի	improper political influence)»: Հարկ է ընդգծել նաև, առաջարկվող փոփոխություններն անխուսափելիորեն առաջացնելու են նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխությունների անհրաժեշտություն, որում փոփոխությունների և լրացումների կատարումը, սակայն, << Սահմանադրությամբ պահանջում է առավել բարդեցված ընթացակարգ, ինչպիսի պայմաններում օրենքների	

			դեպքում գլխավոր դատախազի կողմից նշանակվող փորձագետները պետք է ունենան ապօրինի ակտիվների վերադարձի ոլորտում գիտական կամ պրակտիկ աշխատանքի կամ կոռուպցիոն հանցագործությունների քննության առնվազն երեք տարվա փորձառություն: Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը: 3.1. Որակավորման հանձնաժողովի իրավաբան-գիտնականների թափուր տեղերի համալրումը կատարվում է սույն հոդվածի 2.1-2.4 հոդվածներով սահմանված կարգով: 4. Սույն հոդվածով սահմանված հանձնաժողովների անդամներն անկախ են: Նրանց գործունեության առնչությամբ որևէ միջամտություն արգելվում է: 5.Յուրաքանչյուր դատախազ,	նախագծերի երկրորդ ընթերցման փուլում սահմանադրական օրենքի փոփոխության նախագծի ներառումն օրենսդրական փաթեթում խնդրահարույց է:	

			իրավաբան-գիտնական, ինչպես նաև փորձագետ կարող է լինել սույն հոդվածով սահմանված միայն մեկ հանձնաժողովի կազմում: Հանձնաժողովների անդամները նշանակվում են երեք տարի ժամկետով: 6. Հանձնաժողովներում նոր անդամը լիազորությունները ստանձնում է նշանակման օրվան հաջորդող օրը: 6.1. Հանձնաժողովների անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել գլխավոր դատախազի հրամանով՝ հանձնաժողովի նիստերից երկու և ավելի անգամ անընդմեջ անհարգելի պատճառով բացակայելու դեպքում: Հանձնաժողովների անդամի լիազորությունները դադարում են այն դեպքում, երբ վերջինս ներկայացնում է համապատասխան դիմում կամ ազատվում է դատախազի		

			պաշտոնից կամ զբաղեցնում է դատախազի այնպիսի պաշտոն, որի պարագայում խախտվում են սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված պահանջները: Հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարման փաստն արձանագրվում է գլխավոր դատախազի հրամանով: 7. Սույն հոդվածով սահմանված հանձնաժողովների գործունեության, դատախազ անդամների, ինչպես նաև փորձագետների ընտրության կարգը սահմանում է գլխավոր դատախազը:»:		
5.	**«Հայաստան» խմբակցություն**	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի փոփոխությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Դատախազը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և իր	Ընդունվել է մասնակի: Քննարկվող դրույթը վերաշարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Դատախազը Հայաստանի	Ընդունվել է:

			լիազորությունների շրջանակներում բողոքարկում է այն դատական ակտերը, որոնք ակնհայտ անհիմն են կամ ակնհայտ ապօրինի են։»։	Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և իր լիազորությունների շրջանակներում բողոքարկում է այն դատական ակտերը, որոնք իր կարծիքով չհիմնավորված են կամ անօրինական։»։	
6.	**«Հայաստան» խմբակցություն**	Նախագծի 4-րդ և 22-րդ հոդվածներ	Հանել նախագծի 4-րդ և 22-րդ հոդվածները։	Չի ընդունվել։ Նախագծով առաջարկվող առանցքային փոփոխություններից է պետական շահերի պաշտպանության բնագավառում առկա կառուցակարգերի արդյունավետության բարելավմանն ուղղված կարգավորումները։	Չի ընդունվել։

				Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ Սահմանադրության 176-րդ հոդվածում կիրառվող «պետական շահ» հասկացությունն իր բնույթով լայն է՝ իր մեջ ընդգրկելով նաև համայնաքային շահը: Ասվածը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ Սահմանադրության այլ նորմերում կիրառվող «հանրային շահ» եզրույթը իր մեջ բովանդակում է հասարակական շահը, այսինքն՝ անձանց անորոշ շրջանակի շահը, այլ ոչ թե միայն հանրային իշխանության համապատասխան սուբյեկտների՝ պետության և համայնքների շահը:	

				Հարկ է ընդգծել, որ «հանրային շահ» հասկացության վերոնշյալ մեկնաբանությունն անուղղակիորեն բխում է նաև Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1608 և ՍԴՈ-997 որոշումներով արտահայտված դիրքորոշումներից:	
7.	**«Հայաստան» խմբակցություն**	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 9. Օրենքի 36-րդ հոդվածի՝ 1) 3-րդ մասում «որակավորման հանձնաժողովի անդամների առնվազն վեց ձայնով ընդունված որոշմամբ» բառերը փոխարինել «որակավորման	Չի ընդունվել: Որակավորման հանձնաժողովի անդամների ներկայիս թվի պայմաններում (9 անդամ) ձայների երկու երրորդը հավասար է 6-ի, հետևաբար՝ առաջարկվող փոփոխությունը հասկանալի չէ:	Չի ընդունվել:

			հանձնաժողովի անդամների թվի առնվազն երկու երրորդով ընդունված որոշմամբ» բառերով: 2) 9-րդ մասում՝ «հայտարարվում է նոր մրցույթ» բառերից հետո լրացնել «, եթե այդ ժամկետում գլխավոր դատախազը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով գլխավոր դատախազի տեղակալ չի նշանակում» բառերը:		
8.	**«Հայաստան» խմբակցություն**	Նախագծի 10-րդ հոդված	Նախագծի 10-րդ հոդվածից հետո լրացնել նոր հոդված հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 11. Օրենքի 38.1-ին հոդվածի 3-րդ մասում «որակավորման հանձնաժողովի անդամների առնվազն ութ ձայնով ընդունված որոշմամբ» բառերը փոխարինել «որակավորման հանձնաժողովի անդամների թվի առնվազն երեք քառորդով ընդունված որոշմամբ» բառերով:»:	Չի ընդունվել: Առաջարկվող փոփոխությունը չի ընդունվել՝ հիմք ընդունելով սույն ամփոփաթերթի 4-րդ կետում նշված հիմնավորումները:	Չի ընդունվել:
9.	**«Հայաստան»**	Նախագիծ	Ըստ նախորդ կետում ներկայացված առաջարկության՝	Չի ընդունվել:	Չի ընդունվել:

	խմբակցություն		փոփոխել նախագծի հոդվածների հաջորդականությունը:		
10.	**«Հայաստան» խմբակցություն**	Նախագծի անցումային և եզրափակիչ դրույթներ	Նախագծի եզրափակիչ և անցումային դրույթ նախատեսող հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Գլխավոր դատախազին առընթեր էթիկայի և որակավորման հանձնաժողովների կազմը և կառուցվածքը համապատասխանեցվում է սույն օրենքով սահմանված կարգավորումներին՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:»:	Չի ընդունվել: Սույն ամփոփաթերթի նախորդ կետերի դիտարկումների հաշվառմամբ չի ընդունվել:	Չի ընդունվել:
11.	**Կառավարություն**	Նախագծի 2-րդ և 19-րդ հոդվածներ	Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքի 23-րդ հոդվածում լրացվող նոր 6.1-ին մասում կիրառվում է «ՀՀ գլխավոր դատախազ» ձևակերպումը: Հարկ ենք համարում նշել, որ Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ» երկար	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			արտահայտությանը տրվել է կրճատ տարբերակ, այն է՝ «(այսուհետ՝ գլխավոր դատախազ)»: Հետևաբար առաջարկում ենք Նախագծում կիրառել Օրենքում առաջին իսկ կիրառումից հետո սահմանված կրճատ տարբերակը՝ միաժամանակ բացառելով հապավումների կիրառությունը: Առաջարկը պայմանավորված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում սահմանված իրավադրույթներով: Նույն դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծի 19-րդ հոդվածում կիրառված «ՀՀ գլխավոր դատախազ» ձևակերպմանը:		
12.	**Կառավարություն**	Նախագծի 4-րդ հոդված	Օրենքի 29-րդ հոդվածում սահմանված են դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու բացառիկ դեպքերը և որևէ կարգ նախատեսված չէ: Ուստի առաջարկում ենք Նախագծի 4-րդ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			հոդվածի 2-րդ մասով Օրենքի 29-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ մասի 1-ին պարբերություն «սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգին» կատարված հղումը հստակեցնել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված կանոնը, այն է՝ «Հղումները կատարվում են հստակ և ուղղակի:»: Առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասը ձևակերպել հետևայլ կերպ.«Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու բացառիկ դեպքերի առկայությունը պարզելու նպատակով դատախազն իրավունք ունի՝»		
13.	**Կառավարություն**	Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասով Օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ մասում լրացվող նոր՝ 7-րդ կետի համաձայն նախատեսվում է սահմանել անմիջական վերադաս	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			դատախազի որոշմամբ ստորադաս դատախազից քրեական վարույթը մեկ այլ դատախազի կամ իր վարույթ տեղափոխելու դեպքերը: Մինչդեռ Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասով Օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ մասում լրացվող նոր՝ 7-րդ կետում տրված ձևակերպումը, կարծում ենք՝ կարող է խնդրահարույց լինել իրավական որոշակիության տեսանկյունից: Մասնավորապես քննարկվող դրույթում նշում չի կատարվում տեղափոխվող սուբյեկտի մասին: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք իրավական որոշակիության ապահովման նպատակով Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասով Օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ մասում լրացվող նոր՝ 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «7) ստորադաս դատախազի դատախազության այլ ստորաբաժանում փոխադրվելու		

			դեպքում»:		
14.	**Կառավարություն**	Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ կետ	Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասով Օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ մասում լրացվող նոր՝ 7-րդ կետում կիրառվում է «Հայաստանի Հանրապետության դատախազություն» ձևակերպումը: Հարկ ենք համարում նշել, որ Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության դատախազություն» երկար արտահայտությանը տրվել է կրճատ տարբերակ, այն է՝ «(այսուհետ՝ դատախազություն)»: Հետևաբար առաջարկում ենք Նախագծում կիրառել Օրենքում առաջին իսկ կիրառումից հետո սահմանված կրճատ տարբերակը՝ հասկացությունների միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով: Սույն առաջարկը պայմանավորված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում սահմանված իրավադրույթներով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

15.	**Կառավարություն**	Նախագծի 7-րդ և 10-րդ հոդվածներ	Առաջարկում ենք Նախագծի 7-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 33.1-ին և նոր խմբագրությամբ շարադրվող 37-րդ հոդվածների վերնագրերը շարադրել **թավ**, ինչպես նաև նոր 33.1-ին հոդվածի վերնագիրը համապատասխանեցել գործող Օրենքի 33-րդ հոդվածի վերնագրին՝ առաջնորդվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված կանոնով: Մասնավորապես՝ գործող Օրենքի 33-րդ հոդվածի վերնագիրը ձևակերպված է հետևյալ կերպ՝ «Դատախազ նշանակվելու համար ներկայացվող ընդհանուր պահանջները», իսկ Նախագծի 33.1-ին հոդվածը վերնագրված է՝ «Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձին ներկայացվող պահանջները»: Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք Նախագծի 7-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			33.1-ին հոդվածը վերնագրել հետևյալ կերպ. «Դատախազ նշանակվելու համար թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձին ներկայացվող պահանջները»:		
16.	**Կառավարություն**	Նախագծի 11-րդ հոդված	Նախագծի 11-րդ հոդվածի 3-րդ կետով առաջարկվում է գործող Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը խմբագրել նոր բովանդակությամբ: Մինչդեռ գործող Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-ին կետը սահմանում է, որ. «սույն մասի 2-րդ կետով սահմանված ժամկետում բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը որակավորման հանձնաժողով չներկայացնելու դեպքում դատախազը չի ընդգրկվում դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում.»: Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք, Նախագծի 11-րդ հոդվածի 3-րդ կետով փոփոխվող Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			2-րդ կետում ևս նախատեսել բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկին վերաբերող կարգավորում: Ըստ այդմ Նախագծի 11-րդ հոդվածի 3-րդ կետով փոփոխվող Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2) արտահերթ կարգով, երբ գլխավոր դատախազն առաջարկություն է ներկայացնում որակավորման հանձնաժողով՝ դատախազին սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված դատախազների ծառայողական առաջխաղացման որևէ ցուցակում ընդգրկելու վերաբերյալ՝ ներկայացնելով գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի տված համապատասխան		

			գնահատագիր: Որակավորման հանձնաժողովը գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի տված համապատասխան գնահատագիրն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համապատասխան դատախազից պահանջում և ստանում է բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը: Որակավորման հանձնաժողովի նախագահը բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկն ստանալուց հետո՝ մեկօրյա ժամկետում, այն ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Որակավորման հանձնաժողովի նախագահը եզրակացությունն ստանալուց		

			հետո՝ որակավորման հանձնաժողովի նիստից առնվազն երեք օր առաջ, այն տրամադրում է որակավորման հանձնաժողովի անդամներին: Դատախազն ընդգրկվում է դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում որակավորման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում: Սույն հոդվածի 1-ին մասի 4-5-րդ կետերով նախատեսված դատախազների առաջխաղացման որևէ ցուցակում դատախազն ընդգրկվում է իր անմիջական վերադասի պատճառաբանված զեկուցագրի հիման վրա՝ գլխավոր դատախազի հրամանով: Զեկուցագրի ներկայացումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում սույն հոդվածի 1-ին մասի 4-5-րդ կետերով նախատեսված դատախազների		

			առաջխաղացման որևէ ցուցակում ընդգրկվելուն հավակնող դատախազը գլխավոր դատախազություն է ներկայացնում բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ, որը մեկօրյա ժամկետում ներկայացվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:»,		
17.	**Կառավարություն**	Նախագծի 11-րդ հոդված	Նախագծի 11-րդ հոդվածով գործող Օրենքի 39-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ մասի 2-րդ կետում կիրառվող «դատախազների առաջխաղացման որևէ ցուցակում» բառերն առաջարկում ենք փոխարինել «դատախազների ծառայողական առաջխաղացման որևէ ցուցակում» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին»	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը:		
18.	**Կառավարություն**	Նախագծի 12-րդ և 14-րդ հոդվածներ	Նախագծի բոլոր հոդվածները բաժանված են կետերի, բացառությամբ Նախագծի 12-րդ և 14-րդ հոդվածների, որոնք բաժանված են մասերի: Առաջարկում ենք Նախագծի ամբողջ տեքստում հոդվածների մասերի կամ կետերի բաժանման վերաբերյալ դրսևորել միատեսակ մոտեցում:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
19.	**Կառավարություն**	Նախագծի 16-րդ հոդված	Նախագծի 16-րդ հոդվածով Օրենքի 49-րդ հոդվածում լրացվող նոր՝ 6-րդ մասի համաձայն՝ «6. Սույն մասում նշված եզրույթների մեկնաբանման և կիրառման համար, mutatis mutandis, վերաբերելի են «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի կարգավորումները:»: Վերոնշյալ իրավակարգավորման վերաբերյալ հարկ ենք համարում նշել հետևյալը. Նախ՝ հղում է կատարվում 6-րդ մասում նշված եզրույթներին,	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			սակայն կարծում ենք՝ լրացվող նոր՝ 6-րդ մասում եզրույթների մեկնաբանման կանոնը նախատեսվում է ոչ թե 6-րդ մասում նշված եզրույթների մասով, այլ Օրենքի 49-րդ հոդվածում կիրառվող եզրույթների մեկնաբանման նպատակով: Հետևաբար առաջարկում ենք հստակեցնել Նախագծի 16-րդ հոդվածով Օրենքի 49-րդ հոդվածում լրացվող նոր՝ 6-րդ մասում կատարված հղումը և «մասում» բառը փոխարինել «հոդվածում» բառով: Բացի այդ, Նախագծի 16-րդ հոդվածով Օրենքի 49-րդ հոդվածում լրացվող նոր՝ 6-րդ մասում կիրառվում է «mutatis mutandis» լատիներեն արտահայտությունը: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, առաջարկում ենք «mutatis mutandis» լատիներեն		

			արտահայտությունը գրել հայերեն տառադարձությամբ:		
20.	**Կառավարություն**	Նախագծի 23-րդ հոդված	Նախագծի 23-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված կանոնը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
21.	**«Հայաստան» խմբակցություն**	«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդված	Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.4-րդ կետով. «9.4) Սույն օրենքով սահմանված	Չի ընդունվել: Հաշվի առնելով սույն ամփոփաթերթի նախորդ կետերում ներկայացված դիտարկումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ առաջարկվող	Չի ընդունվել:

			կարգով գլխավոր դատախազին ներկայացնելու գլխավոր դատախազին առընթեր էթիկայի և որակավորման հանձնաժողովներում խմբակցությանը վերապահված իրավաբան-գիտնականի թափուր տեղում նշանակման նպատակով երեք իրավաբան-գիտնականների թեկնածուների ցանկը:»	փոփոխությունները նախատեսվում են սահմանադրական օրենքում, որում փոփոխությունների և լրացումների կատարումը ՀՀ Սահմանադրությամբ պահանջում է առավել բարդեցված ընթացակարգ, ինչպիսի պայմաններում օրենքների նախագծերի երկրորդ ընթերցման փուլում սահմանադրական օրենքի փոփոխության նախագծի ներառումն օրենսդրական փաթեթում խնդրահարույց է:	
22.	**«Հայաստան» խմբակցություն**	«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 9-րդ հոդված	Հոդված 2. Սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածում՝ 1) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.2-րդ կետով.	Չի ընդունվել: Հաշվի առնելով սույն ամփոփաթերթի	Չի ընդունվել:

			«9.2) Գլխավոր դատախազին առընթեր էթիկայի և որակավորման հանձնաժողովներում իրավաբան-գիտնականների թեկնածուների առաջադրման ընթացակարգը»: 2) Լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մաս. «6. ««Դատախազության մասին» օրենքով սահմանված կարգով տեղեկացում ստանալուց հետո խմբակցությունը մեկամսյա ժամկետում՝ իր կանոնադրությամբ սահմանված ընթացակարգով որոշում և Աշխատակազմի ղեկավարի միջոցով գլխավոր դատախազին է ներկայացում գլխավոր դատախազին առընթեր էթիկայի և որակավորման հանձնաժողովներում իրավաբան-գիտնականի տեղում նշանակելու համար թեկնածուների ցանկը՝ կցելով յուրաքանչյուր թեկնածուի կենսագրական տվյալները և	նախորդ կետերում ներկայացված դիտարկումները:	

			գրավոր համաձայնությունը: Եթե Ազգային ժողովի կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությունները մեկից ավելի են, ապա Ազգային ժողովի կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությունները իրավաբան-գիտնականի համապատասխան թափուր պաշտոնում առաջադրում են նախապես համաձայնեցված մեկ միասնական թեկնածուների ցանկ:»:		
23.	**«Հայաստան» խմբակցություն**	«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենք	Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:	Չի ընդունվել: Հաշվի առնելով սույն ամփոփաթերթի նախորդ կետերում ներկայացված դիտարկումները:	Չի ընդունվել: